

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 126

Թէւ Աստուածաշունչը բացատրում է խաչի վրայ տեղի ունեցած Յիսուսի գործը օգտագործելով մի քանի բառեր որպէսզի հաղորդել դրա բազմազան նշանակութիւնը, սակայն կան Նոր Կտակարանում երկու աստուածաբանական եւ իրարու կապած լրացուցիչ բառեր կամ գաղափարներ որոնք Քրիստոսի փոխանորդական գործի հասկանալու համար հիմնական են: Սրանք են յանցահանութիւն եւ Հանդարտեցում բառերը: Նոյն Յունարէն բառը (հիլասմոս) թարգմանել է որոշ Անգլերէն Աստուածաշնչերում որպէս յանցահանութիւն, եւ ուրիշներում որպէս հանդարտեցում: Սրանց հանդերձ, այս բառերը նոյնը չեն եւ չեն նշանակում նոյն բանը, եւ հարկ է որ դրանք պարզօրէն բացատրեն ու հասկացնեն:

**Յանցահանութիւն** – Սուրբ Գրային առմամբ, յանցահանութիւն բառը նշանակում է մեղաւորի յանցանքի հեռացնելու կամ ջնջելու արարքը՝ որոշ վճարման կամ մատուցման միջոցով: Յիսուս Քրիստոսը՝ խաչի վրայ եղած Իր փոխանորդական մահով, վճարեց ամբողջական պատիժը մեղքի համար եւ մատուցանեց հարկաւոր փրկագինը՝ յագեցնելով Աստծոյ արդար պահանջը: Այս գործով Քրիստոսը հեռացրեց (յանցահանեց) մեր մեղքի յանցանքը, մաքրելով մեզ մեր մեղքերից, եւ ուստի ներկայացրեց մեզ Հօրը առջեւ որպէս անմեղադրելի:

**Հանդարտեցում** – Սուրբ Գրային առմամբ, հանդարտեցում բառը նշանակում է յառաջացնել Աստծոյ հաճութիւնը կամ բարեհաճութեան տրամադրութիւնը մեղաւորների հանդէպ: Հանդարտեցնել նշանակում է խաղաղեցնել կամ յագեցնել մի վիրաւորած կամ անյարգած անձին, եւ ուստի յառաջացնել մի փոփոխութիւն այդ անձի կեցւածքում: Իր յանցահանութեան գործի միջոցով՝ Աստծոյ բարկութիւնը կրելով ու խաչի վրայ մահովը, Յիսուսը պատճառեց փոփոխութիւն մեր դէմ եղած Աստծոյ տրամադրութեան մէջ, ետ դարձնելով Իր արդար դժգոհութիւնը եւ բարկութիւնը մեզանից:

Կարող ենք ասել թէ յանցահանութիւնն արարքն է՝ Քրիստոսի մահը, եւ հանդարտեցումը Աստծոյ հանդէպ եղած այդ արարքի ազդեցութիւնն է, որով Քրիստոսի մահի միջոցով, Աստուած որը ժամանակին մեր դէմ էր, այժմ դառնում է մեր համար՝ լինելով բարեհաճ հանդէպ մեզ: Ինչպէս Չարլզ Հաջը բացատրեց՝ «Մեղաւորը, կամ նրա յանցանքը, յանցահանել է. Աստուած, կամ արդարութիւնը, հանդարտեցնել է»: Սրա առթիւ մի օրինակ ենք տեսնում Մաղմոս 85:1-3ում:

Տեսնում ենք այս գաղափարը Նոր Կտակարանի մի քանի համարներում (Ղուկաս 18:13, Եբրայեցիս 2:17, Ա. Յովհաննէս 2:2): Յիսուսն է մեր հանդարտեցումը: Այս խորհուրդը գալիս է Հին Կտակարանի Եբրայերէն «քաֆար» բայից, որն թարգմանել է որոշ համարներում որպէս «ծածկել» կամ «կակղացնել» (Ծննդոց 32:20, Առակաց 16:14): Նաեւ այս գաղափարը պարզօրէն յայտնի է Քաւութեան Օրայ արարողութեան մէջ՝ «եսմ քիփուր» (Ղեւտացոց 23:27, 25:9), ծագում առնելով «քաֆար» բառից, նշանակելով «ծածկման օր»: Տարին մէկ քահանայապետը կ'ստնէր Սուրբ Սրբոցը, եւ կ'սրսկէր կենդանի գոհերի արիւնը ողորմութեան այծռի վրայ՝ «քափորէթ» (Ղեւտացոց 16:14-15), որն էր ուխտի տապանակի ոսկէ ծածկոցը: Ողորմութեան այծռը երբ արիւնով սրսկւած էր, ծածկում էր տապանակի մէջ գտնւած Աստծոյ օրէնքի վկայութիւնը մեղաւորների դէմ, եւ այսպիսով հանդարտեցնում էր Աստծուն ու ետ էր դարձնում Նրա բարկութիւնը:

Թէպէտ այսպէս կենդանիների պատարագները հիմնարկւած Աստծուց՝ որպէս յանցահանման ու փոխանորդական պատարագներ, քաւեցին զոչացող եւ Աստծուն վատահող մեղաւորի բարոյական յանցանքը, սակայն դրանք այս չկատարեցին իրենցից, այլ գալիք ճշմարիտ գոհի շաքներն էին (Եբրայեցիս 10:11-12): Դրանք ծառայեցին ուսուցանել ժողովրդին արիւն թափելու անհրաժեշտութիւնը՝ այսինքն մահը, իրենց մեղքերի յանցահանութեան համար (Եբրայեցիս 9:22): Քաւութեան Օրը նախապատկերացրեց Յիսուս Քրիստոսին՝ ոչ միայն որպէս ճշմարիտ ու ազդեցիկ յանցահանումը, իսկ նաեւ որպէս մեր ճշմարիտ ողորմութեան այծռը ու հանդարտեցումը (Հռովմայեցիս 3:24-25)՝ որի արիւնը ծածկում է Աստծոյ ժողովրդի մեղքերը, հանդարտեցնելով Աստծուն ու ետ դարձնելով Իր բարկութիւնը:

Ուրեմն ընդհանուր «քաւութեան» բառը՝ օգտագործւած խաչի վրայ Քրիստոսի գործի վերաբերեալ, ներառում է այս երկու գաղափարները: Իր յանցահանութեան ու հանդարտեցման գործի միջոցով, Քրիստոսը քաւութիւն կատարեց մեզի համար, իրականացնելով հաշտեցում եւ խաղաղութիւն Աստծոյ եւ մեղաւորների միջեւ:

Ուրիշ կրօններում, մարդն է որ իր անվերջ ջանքերով, արարողութիւններով եւ ընծայներով ջանանում է հանդարտել կամ ողորդել իր աստուածներին: Բայց այդ անհնար է հոգեւորապէս մեռած եւ մեղսալի մարդու համար ճշմարիտ եւ սուրբ Աստծոյ առջեւ: Միայն Աստուած Ինքն կարող է փրկել մեղաւոր մարդուն, հանդարտեցնելով Իր բարկութիւնը հենց Իր արարքով՝ ուղարկելով «Իր Որդուն որպէսզի հանդարտեցում մեր մեղքերի համար»: